ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 05-Ա02
«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի 12.03.2025թ. նիստի

ք.Երևան 12.03.2025թ.

Նիստին մասնակցում էին դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը (նիստի նախագահ), դիտորդ խորհրդի անդամներ Վարազդատ Ասատրյանը, Վահրամ Ապրեսյանը, Գարիկ Մկրտչյանը, Լևոն Պետրոսյանը, Խաչիկ Նազարյանը և տնօրեն Անդրանիկ Ելինյանը (նիստի քարտուղար) և կարգապահական հանձնաժողովի նախագահ Արման Սարգսյանը:

Բացակայող խորհրդի անդամ Խաչատուր Ղահրամանյան:

Արձանագրվեց, որ ներկա են խորհրդի 6 /վեց/ անդամներ, բացակայում է խորհրդի 1 /մեկ/ անդամ, քվորումն ապահովված է, և դիտորդ խորհուրդը իրավազոր է անցնել օրակարգում ընդգրկված հարցերի քննարկմանը:

Օրակարգում ընդգրկված հարցեր՝

1. Արտյոմ Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի վերաբերյալ ՀՀ ԱՆ վերահսկողական վարչության կողմից վերահասցեագրված՝ Դավիթ Սարգսյանի 15.07.2024թ. թիվ 53428-24 հաղորդման հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովի կողմից 24.01.2025թ. կազմված և 05.03.2025թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդին ներկայացված եզրակացության (կարգապահական վարույթը կարճելու մասին) քննարկում:

Արման Սարգսյանը հայտնեց, որ բողոքաբերը հրաժարվել է բողոքից, ներկայացրեց կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց Արտյոմ Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի վերաբերյալ ՀՀ ԱՆ վերահսկողական վարչության կողմից վերահասցեագրված՝ Դավիթ Սարգսյանի 15.07.2024թ. թիվ 53428-24 հաղորդման հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովի կողմից 24.01.2025թ. կազմված և 05.03.2025թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդին ներկայացված եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելուն) հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 6, դեմ չկա.

| | | |
|---|---|---|
| Տիգրան Սահակյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Վարազդատ Ասատրյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Վահրամ Ապրեսյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Խաչատուր Ղահրամանյան | □ Կողմ / □ Դեմ | Բացակա |
| Գարիկ Մկրտչյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Լևոն Պետրոսյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Խաչիկ Նազարյան | ☑ Կողմ / □ Դեմ | |

**Որոշում 1**. Հավանություն տալ Արտյոմ Վարդանյանի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի վերաբերյալ ՀՀ ԱՆ վերահսկողական վարչության կողմից վերահասցեագրված՝ Դավիթ Սարգսյանի 15.07.2024թ. թիվ 53428-24 հաղորդման հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովի կողմից 24.01.2025թ. կազմված և 05.03.2025թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդին ներկայացված եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելուն):

2. Անժելա Գյուրջյանի սնանկության գործով կառավարիչ Արտակ Հարությունյանի վերաբերյալ Անժելա Գյուրջյանի դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովի կողմից 24.01.2025թ. կազմված և 05.03.2025թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդին ներկայացված եզրակացության (կարգապահական վարույթը կարճելու մասին) քննարկում:

Արման Սարգսյանը ներկայացրեց եզրակացությունը: Խորհրդի անդամների հարցերին ի պատասխան ներկայացրեց նաև բողոքաբերի փաստարկներն ու ներկայացրած ապացույցները, ինչպես նաև դրանց վերաբերյալ կառավարչի դիրքորոշումը:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները: Արձանագրվեց, որ սույն բողոքի դեպքում կառավարչի գործողություններում առկա չէ այնպիսի արարք կամ խախտում, որը կառաջացնի կարգապահական պատասխանատվություն:

<u>Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց</u> Անժելա Գյուրջյանի սնանկության գործով կառավարիչ Արտակ Հարությունյանի վերաբերյալ Անժելա Գյուրջյանի դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովի կողմից 24.01.2025թ. կազմված և 05.03.2025թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդին ներկայացված եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելուն) հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 6, դեմ չկա

| | | |
|---|---|---|
| Տիգրան Սահակյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Վարազդատ Ասատրյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Վահրամ Ապրեսյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Խաչատուր Ղահրամանյան | □ Կողմ / □ Դեմ | Բացակա |
| Գարիկ Մկրտչյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Լևոն Պետրոսյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Խաչիկ Նազարյան | ☑ Կողմ / □ Դեմ | |

**<u>Որոշում 2</u>**. Հավանություն տալ Անժելա Գյուրջյանի սնանկության գործով կառավարիչ Արտակ Հարությունյանի վերաբերյալ Անժելա Գյուրջյանի դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովի կողմից 24.01.2025թ. կազմված և 05.03.2025թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդին ներկայացված եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելուն):

3. Սամվել Մկրտչյանի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի վերաբերյալ Սամվել Մկրտչյանի դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովի կողմից 20.01.2025թ. կազմված և 05.03.2025թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդին ներկայացված եզրակացության (կարգապահական վարույթը կարճելու մասին) քննարկում:

Արման Սարգսյանը ներկայացրեց եզրակացությունը: Խորհրդի անդամների հարցերին ի պատասխան ներկայացրեց նաև բողոքաբերի փաստարկներն ու ներկայացրած ապացույցները, ինչպես նաև դրանց վերաբերյալ կառավարչի դիրքորոշումը:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները: Արձանագրվեց, որ սույն բողոքի դեպքում կառավարչի գործողություններում առկա չէ այնպիսի արարք կամ խախտում, որը կառաջացնի կարգապահական պատասխանատվություն:

<u>Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց</u> Սամվել Մկրտչյանի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի վերաբերյալ Սամվել Մկրտչյանի դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովի կողմից 20.01.2025թ. կազմված և 05.03.2025թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդին ներկայացված եզրակացության (կարգապահական վարույթը կարճելու մասին) հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 6, դեմ չկա.

| | | |
|---|---|---|
| Տիգրան Սահակյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Վարազդատ Ասատրյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Վահրամ Ապրեսյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Խաչատուր Ղահրամանյան | □ Կողմ / □ Դեմ | Բացակա |
| Գարիկ Մկրտչյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Լևոն Պետրոսյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Խաչիկ Նազարյան | ☑ Կողմ / □ Դեմ | |

**<u>Որոշում 3</u>**. Հավանություն տալ Սամվել Մկրտչյանի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի վերաբերյալ Սամվել Մկրտչյանի դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովի կողմից 20.01.2025թ. կազմված և 05.03.2025թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդին ներկայացված եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելու մասին):

4. Գուրգեն Մանուկյանի սնանկության գործով կառավարիչ Վահե Նազարեթյանի վերաբերյալ ՀՀ ԱՆ-ից վերահասցեագրված՝ Աշոտ Սարուխանյանի թիվ Մ/7375-24 դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովի կողմից 05.03.2025թ. կազմված և 07.03.2025թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդին ներկայացված եզրակացության (կարգապահական վարույթը կարճելու մասին) քննարկում:

Արման Սարգսյանը հայտնեց, որ բողոքաբերը հրաժարվել է բողոքից, ներկայացրեց կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց Գուրգեն Մանուկյանի սնանկության գործով կառավարիչ Վահե Նազարեթյանի վերաբերյալ ՀՀ ԱՆ-ից վերահասցեագրված՝ Աշոտ Սարուխանյանի թիվ Մ/7375-24 դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովի կողմից 05.03.2025թ. կազմված և 07.03.2025թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդին ներկայացված եզրակացության (կարգապահական վարույթը կարճելուն) հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 6, դեմ չկա.

| | | |
|---|---|---|
| Տիգրան Սահակյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Վարազդատ Ասատրյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Վահրամ Ապրեսյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Խաչատուր Ղահրամանյան | □ Կողմ / □ Դեմ | Բացակա |
| Գարիկ Մկրտչյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Լևոն Պետրոսյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Խաչիկ Նազարյան | ☑ Կողմ / □ Դեմ | |

Որոշում 4. Հավանություն տալ Գուրգեն Մանուկյանի սնանկության գործով կառավարիչ Վահե Նազարեթյանի վերաբերյալ ՀՀ ԱՆ-ից վերահասցեագրված՝ Աշոտ Սարուխանյանի թիվ Մ/7375-24 դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովի կողմից 05.03.2025թ. կազմված և 07.03.2025թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդին ներկայացված եզրակացության (կարգապահական վարույթը կարճելուն):

5. Կառավարիչ Ալբերտ Ասոյանի՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում անդամությունը դադարեցնելու հարցի քննարկում (հիմք՝ ՀՀ ԱՆ կառավարչի որակավորումը դադարեցնելու մասին 16.12.2024թ. թիվ 115-Ա որոշում):

Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց հարցի էությունը, մասնավորապես հայտնեց, որ ՀՀ սնանկության դատարանի թվով 5 /հինգ/ որոշումներով դադարեցվել են Ալբերտ Ասոյան՝ որպես կառավարչի լիազորությունները: Նշեց, որ իր տեղեկություններով դրանցից երեք դատական ակտերը մտել են ուժի մեջ՝ չեն բողոքարկվել:

Վարազդատ Ասատրյանը հայտնեց, որ սույն դեպքում էական նշանակություն ունի ՀՀ ԱՆ որոշման հիմքում դրված թվով 5 ակտերի ուժի մեջ մտնել-չմտնելու հանգամանքը, և օրակարգի հարցը կարող է քննարկվել միայն այդ հանգամանքները ճշտելուց հետո: Միաժամանակ առաջարկեց օրակարգի հարցի քննարկմանը հրավիրել և մասնակից դարձնել կառավարիչ Ալբերտ Ասոյանին:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները: Տիգրան Սահակյանը հավանություն տվեց Վարազդատ Ասատրյանի մոտեցմանը և առաջարկեց սույն հարցի քննարկումը հետաձգել, այդ մասին գրավոր տեղեկություն պահանջել Ալբերտ Ասոյանից և վերջինիս հրավիրել հարցի քննարկման նպատակով հրավիրվելիք խորհրդի նիստին:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց օրակարգում ընդգրկված հարցի քննարկումը հետաձգելու, Ալբերտ Ասոյանի վերաբերյալ կայացված դատական ակտերի բողոքարկված լինելու հանգամանքը ճշտելու նպատակով Ալբերտ Ասոյանից տեղեկություն ստանալու համար վերջինիս գրավոր հարցում ուղարկելու և այդ հարցի քննարկման նպատակով հրավիրվելիք խորհրդի նիստին Ալբերտ Ասոյանին մասնակից դարձնելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 6, դեմ չկա.

| | | |
|---|---|---|
| Տիգրան Սահակյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Վարազդատ Ասատրյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Վահրամ Ապրեսյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Խաչատուր Ղահրամանյան | □ Կողմ / □ Դեմ | Բացակա |
| Գարիկ Մկրտչյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Լևոն Պետրոսյան | ☑ Կողմ / □ Դեմ | |
| Խաչիկ Նազարյան | ☑ Կողմ / □ Դեմ | |

Որոշում 5. Հավանություն տալ օրակարգում ընդգրկված հարցի քննարկումը հետաձգելու, Ալբերտ Ասոյանի վերաբերյալ կայացված դատական ակտերի բողոքարկված լինելու հանգամանքը ճշտելու նպատակով Ալբերտ Ասոյանից տեղեկություն ստանալու համար վերջինիս գրավոր հարցում ուղարկելու

և այդ հարցի քննարկման նպատակով հրավիրվելիք խորհրդի նիստին Ալբերտ Ասոյանին մասնակից դարձնելու վերաբերյալ հարցին (կատարող՝ Անդրանիկ Ելինյան, Ալբերտ Ասոյանին գրություն ուղարկելու կատարման ժամկետը՝ 3 օր, կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող՝ Վ.Ապրեսյան):

6. «ՍԳԿԿ» ԻԿԿ 2025թ. հունվար և փետրվար ամիսների ֆինանսական վիճակի քննարկում:

Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց իրավիճակը, հայտնեց, որ դիտորդ խորհրդի որոշման համաձայն անդամավճարները չվճարած կառավարիչներին բանավոր իրազեկել է խորհրդի որոշման մասին: Հայտնեց, որ մինչև 14.03.2025թ. «ՍԳԿԿ» ԻԿԿ-նկատմամբ պարտավորություն ունեցող՝ անդամությունը դադարեցված անձանց նկատմամբ դատարան ներկայացված կլինեն գումարի բռնագանձման մասին հայցադիմումները, և գրավոր ծանուցված կլինեն անդամավճարի ուշացում ունեցող բոլոր կառավարիչները:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց Անդրանիկ Ելինյանի զեկույցն ի գիտություն ընդունելու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 6, դեմ չկա.

| | | |
|---|---|---|
| Տիգրան Սահակյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Վարազդատ Ասատրյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Վահրամ Ապրեսյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Խաչատուր Ղահրամանյան | ☐ Կողմ / ☐ Դեմ | Բացակա |
| Գարիկ Մկրտչյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Լևոն Պետրոսյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Խաչիկ Նազարյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |

**Որոշում 6**. Անդրանիկ Ելինյանի զեկույցն ընդունել ի գիտություն:

7. Լրացուցիչ հարց – Սնանկության գործով կառավարիչների կողմից անդամավճարների վճարման գործընթացի թափանցիկության ապահովման հարցը

Գարիկ Մկրտչյանը հայտնեց, որ ցանկալի կլինի, որպեսզի կառավարիչները հնարավորություն ունենան առանց լրացուցիչ ջանքերի տեղեկություն ստանալ իրենց անդամավճարների վճարման և այդ գծով պարտավորությունների վերաբերյալ:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները, ովքեր հայտնեցին, որ այդ գործընթացը պետք է լինի դյուրին և թափանցիկ:

Տիգրան Սահակյանը առաջարկեց «ՍԳԿԿ» ԻԿԿ կայքում կատարել փոփոխություն՝ ներդնել անդամավճարների վճարման մասին տեղեկատվությունը արտացոլող գործիք, որի միջոցով կառավարիչները կտեսնեն իրենց կատարած անդամավճարի վճարումները և այդ գծով պարտքերը:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց «ՍԳԿԿ» ԻԿԿ կայքում անդամավճարների վճարման մասին տեղեկատվությունը արտացոլող գործիք ներդնելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 6, դեմ չկա.

| | | |
|---|---|---|
| Տիգրան Սահակյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Վարազդատ Ասատրյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Վահրամ Ապրեսյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Խաչատուր Ղահրամանյան | ☐ Կողմ / ☐ Դեմ | Բացակա |
| Գարիկ Մկրտչյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Լևոն Պետրոսյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Խաչիկ Նազարյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |

**Որոշում 7**. Հավանություն տալ «ՍԳԿԿ» ԻԿԿ կայքում անդամավճարների վճարման մասին տեղեկատվությունը արտացոլող գործիք ներդնելուն հավանություն տալու (կատարող՝ Ա.Ելինյան, հսկողություն իրակնացնող՝ Տ.Սահակյան):

8. Լրացուցիչ հարց – «ՍԳԿԿ» ԻԿԿ հեռակա արտահերթ ժողով հրավիրելու մասին:

Տիգրան Սահակյանը ներկայացրեց հարցի էությունը: Հայտնեց, որ նախորդ դիտորդ խորհրդի նախաձեռնությամբ անդամավճարների, մուտքի և այլ վճարների չափի ու վճարման վերաբերյալ կարգում կատարվել է փոփոխություն՝ 65 և ավելի տարիք ունեցող կառավարիչների ամսական անդամավճարը սահմանվել է 1000 /մեկ հազար/ դրամ: Դրա նպատակը եղել է այն, որ այդ ժամանակ

65 և ավելի տարիք ունեցող կառավարիչներին նոր սնանկության գործեր չեն մակագրվել՝ գործերի թիվը նվազել է: Հավելեց, որ նշված հարցը կարգավորվել է՝ այդ կառավարիչները մյուսների հետ հավասար օգտվում են վիճակահանությանը մասնակցելու իրավունքից: Նման պայմաններում անարդարացի է անդամավճարների նման տարբերությունը:

Առաջարկեց անդամավճարների, մուտքի և այլ վճարների չափի ու վճարման վերաբերյալ կարգում կատարել փոփոխություն՝ անկախ տարիքից բոլոր կառավարիչների համար սահմանել միևնույն՝ ամսական 10000 /տասը հազար/ դրամ անդամավճար:

Ներկա խորհրդի անդամները, բացի Լևոն Պետրոսյանից, իրենց հավանությունը տվեցին առաջարկությանը, հայտնեցին, որ հավասար իրավունքների պայմաններում արդարացի չէ անդամավճարի չափի տարբերությունը:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց անդամավճարների չափը բոլոր կառավարիչների համար միևնույն՝ 10000 դրամը սահմանելու նպատակով անդամավճարների, մուտքի և այլ վճարների չափի ու վճարման վերաբերյալ կարգում փոփոխություն կատարելու նպատակով «ՍԳԿԿ» ԻԿԿ հեռակա արտահերթ ժողով հրավիրելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 5, դեմ 1.

| | | |
|---|---|---|
| Տիգրան Սահակյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Վարազդատ Ասատրյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Վահրամ Ապրեսյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Խաչատուր Ղահրամանյան | ☐ Կողմ / ☐ Դեմ | Բացակա |
| Գարիկ Մկրտչյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |
| Լևոն Պետրոսյան | ☐ Կողմ / ☑ Դեմ | |
| Խաչիկ Նազարյան | ☑ Կողմ / ☐ Դեմ | |

**Որոշում 8**. Հավանություն տալ անդամավճարների չափը բոլոր կառավարիչների համար միևնույն՝ 10000 դրամը սահմանելու նպատակով անդամավճարների, մուտքի և այլ վճարների չափի ու վճարման վերաբերյալ կարգում փոփոխություն կատարելու նպատակով «ՍԳԿԿ» ԻԿԿ հեռակա արտահերթ ժողով հրավիրելուն (կատարող՝ Ա.Ելինյան, հսկողություն իրականացնող՝ Տ.Սահակյան):

Նիստի նախագահ՝ Տիգրան Սահակյան

Նիստի քարտուղար՝ Անդրանիկ Ելինյան